ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ՝ ՁՈՒՐԸ ԳՅԻՐ...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS, Օգոստոս, 2013, թվեր 20-21, БАРЕГОРЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԵՌԱՄՍՅԱ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԵՐ ԱՆՑՅԱԼԻ ՓԱՌՔԵՐԻՑ

Կարսի բերդը. «Դավաճանությունը, նաիրյան ստոր դավաճանությունն է բերդը հանձնել եկվոր սրիկաներին» (Ե. Չարենց, Երկիր Նաիրի)

Վանի, Կիլիկիայի Լևոն թագավորի և հայոց մյուս անմատչելի բերդերը՝ նույնպես...

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՌԱՀՎԻՐԱՆԵՐԸ. ԱՐՑԱԽ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ



Մեր ոխերիմ հարևանները չհանդուրժեցին արցախահայության՝ ադրբեջանական գերիշխանությունից ազատ հանրաքվեով ինքնորոշվելու իրավունքը և երկու տասնամյակ առաջ մեզ լռեցնելու և հպատակեցնելու համար պարտադրեցին մի պատերազմ, որում իրենք պարտվեցին: Նրանք նախապես շատ էին ինքնավստահ, որովհետև գորբաչովյան հովանավորչությունից բացի ունեին ռազմական տեխնիկայի ու զինուժի բացարձակ գերակշռություն, պատերազմի փորձ ունեցող աֆղան մուջահեդների և այլ վարձկանների, տարազգի և հատկապես թուրք զորահրամանատարների անմիջական մասնակցություն: Սակայն, միևնույն է, նրանք պարտվեցին, որովհետև իր հայրենիքն ու ազատությունը, ազգային ու մարդկային արժանապատվությունը պաշտպանելու ելավ համախումբ հայությունը, որին քաջալերում էր նախնիների հերոսական ոգին:

«Ռանչպարների կանչը» վիպասքի նշանավոր հեղինակը՝ Խաչիկ Դաշտենցը, որ հրաշալիորեն փառաբանել էր 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ազատամարտիկ - ֆիդայիների, սրբացված հերոսների գրեթե անհավատալի սխրանքները, երկմտում էր, թե այդպիսի սերունդ եղավ և հետո դժվար թե լինի: Սակայն նա ինքը կզարմանար և կհերքեր իրեն, եթե տեսներ 20-րդ դարավերջի արցախյան հերոսամարտի փառապանծ սերնդին՝ իր զավակներին ու թոռներին, որոնք ունեին իր և ողջ հայոց գրականության ու պատմության դաստիարակությունը: Կարելի է ասել՝ այս սերունդը նույնպես հերոսական էր. պարզապես հերոսների անուններն էին փոխվել. Արաբոյին, Սերոբին, Անդրանիկին, Գևորգ Չաուշին, Դժոխք Հրայրին, Մովսես Սիլիկյանին, Դրոյին փոխարինել էին Մոնթե Մելքոնյանը, Կոմանդոսը, Բեկոր Աշոտը, Թաթուլ Կրպեյանը, Շահեն Մեղրյանը, Լեոնիդ Ազգալդյանը, Դուշման Վարդանը, նոր Արծիվ Պետոն, նոր Արաբո Մանվել Եղիազարյանը և ուրիշներ: Այդ հարազատ ու նվիրական «ուրիշներից» մեկն էր Արցախ(Դալտոն) Բունիաթյանը, որի համառոտ դիմանկարը ներկայացնում ենք «Բարեգործի» ընթերցողներին:

Արցախը 1939 թ. ծնվել էր հենց հայոց հինավուրց Արցախ աշխարհի Մարտակերտի շրջանի Մեծշեն գյուղում: Հայրը՝ Ասլանը, Աշտարակի Կոշ գյուղից էր: Մանուկ Դալտոնը դպրոց է



հաճախել ծննդավայրում, հետո ընտանիքը տեղափոխվել է ՀՀ Արմավիր քաղաքը, որի 2-րդ միջնակարգ դպրոցն ավարտելով՝ 1959 թ. նա ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտ: 1965 - 68 թթ. վիրաբույժ է աշխատել Ցելինոգրադի մարզի Աղբասարի քաղաքային հիվանդանոցում, ապա՝ Հայաստանում՝ Գյումրիի երկաթգծի հիվանդանոցում:

Ամենամարդասիրական մասնագիտություն ստացած այս անհատականությունը գործնական վիրաբուժությունը զուգակցում էր գիտահետազոտական աշխատանքին, անընդհատ կատարելագործում էր իր հմտությունները՝ կենսափրկիչ հարստացնելով բժշկագիտության վերջին նվաճումներով: Իր հերթին ինքն էլ գրել է մի քանի տասնյակ գիտական ու հանրամատչելի հոդվածներ՝ նվիրված վիրաբուժության ամենատարբեր խնդիրների: Մարդու կյանքի ու ճակատագրի հանդեպ բարձրագույն պատասխանատվությունը հիպոկրատյան երդմանը գումարում էր բանաստեղծ - արվեստագետի բարեխղճությունը, պարտավորեցնում գործել առանց սխալվելու իրավունքի. չէ՞ որ նա ողջ խորությամբ էր ըմբռնել բանաստեղծական բանաձևի խորհուրդը՝

Մարդու ամեն մի սխալմունք
մարդը ինքն էլ կշտկի,
Բայց բժշկի սխալմունքը
միայն հողը կծածկի...

Հայոց գրականությունն ու պատմությունը, համաշխարհային մշակույթի և փիլիսոփայության պատմությունը բուն մասնագիտությունից հետո նրա գլխավոր ուսուցիչներն էին, որ ուղղորդում էին նրա ճիշտ կողմնորոշումը ծավալվող նորօրյա իրադարձություններում:

Նախանձելիորեն ճշգրիտ էր նրա՝ որպես հայ մտավորականի, քաղաքացիական դիրքորոշումը: Պատահական չէր, որ նա հայտնվեց այն փոքրաթիվ խիզախների խմբում, որին 1983 թ. հաջողվեց Վլադիմիրի բանտին կից գերեզմանոցից գաղտնաբար հայրենիք տեղափոխել Գարեգին Նժդեհի սրբասուրբ մասունքները: Խորհրդային ժամանակներում խիստ վտանգավոր, գրեթե արկածային գործողության մանրամասները նա հետո շարադրեց իր «Նժդեհի վերադարձը» գրքում:

Պատմական անարդարության դեմ հայրենասիրական նույն ազնիվ ընդվզումը նրան դարձրեց Աբովյանում ու ողջ Կոտայքի մարզում արցախյան շարժման նախաձեռնողներից մեկը: Իսկ երբ դրացի ոխերիմ թշնամին իր պարտադրած պատերազմով ուզեց խեղդել արցախահայության ազատության տենչը, հայրենիքի զինվորը, արյան կանչով 1992-ի սկզբից մեկնեց գործող բանակ, որպես վիրաբույժ ու զինվոր մասնակցեց գրեթե բոլոր մարտական գործողություններին: Կռվի ամենաթեժ հանգույցներում հենց Արցախ Բունիաթյանի ներկայությունն էր անհրաժեշտ: Եվ նա, կամավոր հրաժարվելով անդորրավետ կյանքից, գնաց ուղիղ նայելու մահվան աչքերին՝ իր մասնագիտական հմտությունները գործադրելու և նրա երախից մարդկային կյանքեր փրկելու պատմական վսեմ առաքելությամբ: Բայց նա չէր սպասում, որ գիշատիչ թշնամու թիրախում հայտնված կլինեն նաև խաղաղ բնակիչներ, կանայք ու երեխաներ:

Ռազմադաշտում և զինվորական հոսպիտալում պատերազմը ներկայանում է իր իսկական դեմքով և թելադրում իր գրված ու չգրված կանոնները: Անշուշտ, բժիշկ Բունիաթյանը միայնակ չէր, նույն սահմանային էքզիստենցիալ վիճակներում մահվան դեմ կռիվ էին տալիս բազմաթիվ անձնվեր հայ բժիշկներ, ինչպես, օրինակ, գլխավոր բժիշկ Սերգեյ Օհանյանը, բացառիկ միկրովիրաբույժ Արտավազդ Սահակյանն ու շատերը: Նրանք շարժական ու անշարժ վիրահատարանները դարձրել էին վիրավոր ազատամարտիկների յուրօրինակ «վերանորոգման կայաններ», որտեղ ապաքինվում ու նորից մարտադաշտ էին վերադառնում հայրենիքի նվիրյալները: Այդ բժիշկների մեջ Արցախ Բունիաթյանը բոլորից տարբերվում էր իր գրող լինելու առավելությամբ: Խաղաղ ժամանակների ռոմանտիկ բանաստեղծը, սակայն պատերազմում վերածվեց ազնիվ օրագրողի ու վավերագրողի, որը դժվարին պայմաններում, բարդ ու դյուրին վիրահատություններից հետո, հաճախ մոմի լույսի տակ, հրանոթային որոտների, սուրացող գնդակների տեղատարափի, մահամերձների տնքոցների, մահամերձ հոգեվարների վերջին սրսփոցի, վիրավորների հառաչանքների, զոհվածների հարազատների, նրանց մարտական ընկերների տղամարդկային ողբ ու կականի ուղեկցությամբ թղթին էր հանձնում իր անմիջական տպավորությունները՝ ջանալով անխաթար ներկայացնել իրադարձություններն ու դեմքերը: Այսպես ծնունդ առան նրա՝ «Արյունոտ օրեր» խորագրով պատկառելի հատորները, որոնք ինքը համեստորեն որակել է չոր ու ցամաք մի եզրաբառով՝ **վավերագրություն,** որն ամենևին էլ լիարժեք չի բնորոշում այս բազմաշերտ յոթնհատորյա մատյանի իրական արժեքը: Եվ պարզվում է՝ մի քանի հատոր էլ դեռևս անտիպ է, ու ձեռագրերի մի մասն էլ չարամիտները անհետացրել են: Եղածն արդեն այն երևույթներից է, որի հատորների էջերում փաստերը եղածին պես ներկայացնելը արդարացվում է: Ներկայացվող դեպքերից ու դեմքերից ոչ մեկը հորինված չէ, չկա իրականի և երևակայականի հարաբերակցության խնդիր, դեպքերը ներկայացված են հաջորդականությամբ, դիպաշարի հիմնական գիծը արցախյան ազատագրական պատերազմի բնական ընթացքն է:

Ազգային հերոս Մոնթեն ասում էր, թե թուրքն իր մատները մխրճել է Արցախի մարմնի մեջ և ուզում է հոշոտել, իսկ իր նպատակը այդ մատները կտրելով Արցախն ազատագրելն է: Արցախ Բունիաթյանի վավերագրության ամենակարևոր արժանիքներից մեկն այն է, որ ճշգրտորեն ներկայացնում է նախահարձակ գիշատիչ թշնամու իրական դեմքը, այն, թե ինչպես էր իրականացվում Արցախի հայաթափման թուրք-ազերիական հատուկ խնամքով մշակված ծրագիրը, կոնկրետ հայկական որ բնակավայրի վրա է հարձակվել թշնամին, ինչ ավերածություններ է գործել, որքան հայ է սպանել կամ խեղել և ինչպիսի հակահարվածներից հետո է պարտվել ու միջնորդների միջոցով զինադադար աղերսել, որն այսօր խախտում է անմրցելի ստորությամբ: Այնպես որ, թե՛ պատմագետը, թե՛ գեղագետ գրողը հսկայական նյութ կարող են քաղել այս վավերականորեն հավաստի սկզբնաղբյուրից իրենց գիտական կամ գեղարվեստական ապագա երկերն ստեղծելիս:

Այս ամենով հանդերձ՝ Արցախ Բունիաթյանի սույն էպոպեան ոչ միայն փաստավավերագրական է, այլև շատ առումներով հենց գեղարվեստական:

Ակամա նա հյուսել իր՝ հեղինակի ոչ միշտ տեսանելի կերպարը, որի պատումը հագեցած է պատկերավորմամբ, արտահայտչական զանազան միջոցներով ու գեղարվեստի տարրերով, առատ են իրադրությանն ու հերոսների հոգեվիճակներին ու տրամադրությանը համապատասխանող բնապատկերները, քնարական շեղումներն ու փիլիսոփայական խորհրդածությունները: Յոթնհատորյակի էջերում պատկերված վիրավոր ազատամարտիկները, պատերազմի գրեթե բոլոր մասնակիցները, որոնց հետ թեկուզ թռուցիկ հանդիպում է ունեցել հեղինակը, ներկայացված են իրենց մարդկային բնավորության ու կենսագրության առավել բնորոշ գծերով, իրենց հոգեբանությամբ ու նպատակադրմամբ, ծննդյան վայրերով ու տարեթվերով, վնասվածքների բնույթով կամ հիվանդության ճգրիտ պատմությամբ: Ու թեև տեղ-տեղ բոցկլտում է պատկերավոր խոսքը՝ հասնելով փլիսոփայական ու գեղարվեստական ընդհանրացումների, օրագրության ու վավերագրության պահանջով դեմքերը հաճախ չեն բարձրանում գեղարվեստական կերպարի մակարդակ, երբեմն էլ էջերով թվարկվում են նրանք՝ իրենց մասին հեղինակին հայտնի թռուցիկ տեղեկությունների պարզ վկայակոչմամբ: Բայց հենց այս է եղել հեղինակային նպատակադրումը, որ նա իրականացրել է կատարյալ բարեխղճությամբ: Իր օրագրերը նա սկսում է ամիս-ամսաթվի և օրվա հին հայկական ամվանման պարտադիր նշումներով, արտահայտում իր գրողական վերաբերմունքը դեպքերի ու դեմքերի նկատմամբ: Համոզվելու համար բերենք միայն երկու օրինակ. «Ծանր գիշերին հաջորդող առավոտի լույսը հոսում էր երկնքի պատռված ստամոքսից», «Արդեն երեք ամիս լրագրողական գրիչը զենքով փոխարինած Վարդան Դևրիկյանին աչքերից հազիվ ճանաչեցի, որովհետև գլուխը վիրակապված էր, իսկ երկա-

րած մորուքը ավելի էր կարճացնում նրա առանց այն էլ ոչ երկար հասակը» և այլն: Սուր դիտողականությամբ բնորոշում է նկատած և՛ մարդկայնորեն գեղեցիկը, և՛ տգեղն ու այլանդակը, պատկերավոր ու անկեղծորեն է արտացոլել ամեն մանրուք, որ արժևորվում է համապատկերում:

Պատերազմի իրական դեմքը ցոլանում է անկողմնակալ նկարագրություններում, հերոսների սխրանքները փառաբանվում են՝ մերոնց սխալների անխնա դատապարտմանը զուգահեռ, ինչպես, օրինակ, «Արաբո» ջոկատի մարտիկներին թուրքերը կոտորեցին, որովհետև թշնամու կուտակման կենտրոնը խիզախորեն մխրճված քաջարի հրամանատար Մանվել Եղիազարյանին աջ ու ձախ թևերը օգնության չհասան»:

Ցավով է արտահայտվել նաև հայրենի հողն ու տունը լքողների, դասալիքների, խուճապահարների, անպատասխանատու զինկոմների երկչոտ գործողությունների, «իրենց քաջությանը վախկոտություն խառնած» այն հրամանատարների պարտվողական հոգեբանության մասին, որոնց պատճառով պարզապես ավելացել են մեր զոհերն ու կորուստները:

1994 թ. մարտ-մայիսյան դեպքերը պատկերող 7-րդ հատորն ունի «Օ՛ր, վաղը ի՞նչ գույն ես ունենալու» խորհրդանշական վերնագիրը: Սա էլ ամփոփում է զինադադարից հետո Բերձորի հիվանդանոցի գլխավոր բժիշկ և Բերձորի պատվավոր քաղաքացի դարձած, ՀՀ և ԼՂՀ բազմաթիվ պարգևների ու կոչումների արժանացած զինվոր-բժշկի յոթնհատորյակը, որը մեր ժողովրդի խիզախության, ցավի ու հերոսության անգնահատելի մատյանն է և իր՝ Արցախ Բունիաթյանի անմահության հուշարձանը:

Բազում մահեր տեսած, բազում կյանքեր փրկած այդ պանծալի հայորդին հիմա հանգչում է Եռաբլուր պանթեոնում՝ իր մարտական ընկերների կողքին: Սխրանքներով միասին էին, մահով էլ միացավ նրանց՝ բազմաթիվ ազգային երազներ անկատար թողած, բայց սխրալի վարքագծով լիարժեք կատարեց իր որդիական պարտքը ծննդավայր Արցախի, Հայաստանի Հանրապետության ու համայն հայության առջև:

Հավե՜րժ փառք նրա լուսավոր ու խնկելի անմահ հիշատակին:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՀԱՅԻ ՀԵՏ

Հայերս ցրված ենք ու, ցավոք, շարունակում ենք ցրվել աշխարհով մեկ, և հայրենաթող ամեն մի հայ մեր ժողովրդի մի մասնիկն է: Ազգահավաքի և հայրենի հողերում հայության համախմբման միասնականության երազանքը դաժանորեն հեռու է իրականությունից, և անգամ համացանցի առկայությամբ հնարավոր չէ անմիջական շփում ունենալ միմյանց հետ ու բոլորի: Ի՞նչ գիտենք, թե հայրենիքից հեռացած հայ մարդն օտարության մեջ ինչպե՛ս է ապրում, ինչ հոգսեր ու մտահոգություններ ունի, ի՞նչ լեզվով է խոսում յուրայինների և օտարների հետ, իր ինքնությունը, ազգային դիմագիծը պահե՞լ է, թե «շաքարի պես հալվել թեյի մեջ», հայրենիքը և հարազատներին, իր լքված տունն ու հողը, իր ժողովրդին հիշո՞ւմ է, թե չէ, նրանց բախտի համար տագնապո՞ւմ է, թե՞ բանաստեղծի ասածի պես «հավետ կորած է հայրենյաց համար»: Ու երբ որևէ առիթով, որևէ վայրում հանդիպում ենք, սկսվում է բնական հարցուփորձը. ո՞նց եք – ո՞նց չեք, աշխատո՞ւմ եք, թե նպաստառու եք, գո՞հ եք Ձեր նոր միջավայրից ու ապրուստից և այլն, և այլն:

Գյուղում եմ: Հեռախոսով լսում եմ Գ. Մելիքյանի պարտավորեցնող ձայնը.

« – Որտեղ էլ լինես՝ շտապ արի. մի հետաքրքիր հայ է հայտնվել. ուզում եմ ծանոթանաս»:

*Հասա և **Նիկոլայ Մակիչի Գաբրիելյան** հայի հետ վարեցի այս հարցազրույցը, որը սիրով ներկայացնում եմ ընթերցողին:*

ԹՂԹԱԿԻՑ – *Թույլ տվեք ողջունել Ձեզ և Ձեր ազնվափայլ տիկնոջը: Գուրգեն Մելիքյանից տեղեկացա, որ մի քանի օրով եք Հայաստանում, և շնորհակալ եմ, որ համաձայնեցիք հարցազրույց տալ «Բարեգործի» ընթերցողներին:*

Խնդրում եմ՝ անձամբ ներկայացրեք Ձեր մասին տեղեկությունները:

Ն. Գ.– Շարքային հայ եմ, ծնունդով Ադրբեջանի Գանջա (մեր պատմական Գանձակն է, որ դարձել է Կիրովաբադ ու Գյանջա) քաղաքում: Գիտե՞ք՝ քանի անգամ եմ տնավեր եղել: Թուրքերը երբոնք հուսալի հարևաններ չեն: Նրանց հարկադրանքով 1976 թ. լքել եմ ծննդավայրս ու մեկնել Ռուսաստան, հաստատվել Կրասնոդարի երկրամասի Կարինովսկ քաղաքում: 1988 թ. ազգային զարթոնքի վերելքի ժամանակ ամեն ինչ ծախեցի ու եկա Հայաստան, ուր ապրեցի երեք տարի: Մինչև թուրքերի պարտադրած պատերազմի սկսվելն եմ վերադարձել Կարինովսկ, այլապես զինվոր կդառնայի: Հասարակ մարդ եմ, բայց հմուտ, փնտրված ավտոնորոգող եմ. շատ նշանավոր մարդկանց խփված մեքենաներ եմ նորոգել:: Ուր գնում եմ՝ հարգում ու սիրում են ինձ: Արցախյան պատերազմին թեև անձամբ չեմ մասնակցել, բայց իմ վաստակած գումարները ծառայեցրել եմ այդ նպատակին, օգնել և հիմա էլ օգնում եմ վիրավոր ազատամարտիկներին, ինչպես Գոռին ու նրա համագյուղացի Վաչոյին, որը կրում է եղբորս անունը: Ցավով նկատել եմ, որ դրսի հայերի ուղարկած օգնությունը միշտ չէ, որ տեղ հասնում ու նպատակին ծառայում: Սիրում ու մեծարում եմ անկեղծ հայրենասերներին. նրանց նվիրումը թե չլիներ՝ մենք այսօր ազատագրված Արցախ չէինք ունենա: Այսօր էլ այստեղ եմ, որովհետև ուզեցել եմ անձամբ տեսնել մեր հաղթանակի մեջ մեծ դերակատարություն ունեցած մարդկանց: Իմացել եմ Գուրգեն Մելիքյանի մասին և ուզեցել եմ անձամբ ճանաչել նրան: Իրո՞ք նա այն լեգենդն է, որի մասին տարիներ շարունակ լսել եմ (միջամտում է Գ. Մելիքյանը և Ն. Գևորգյանի հորդորով ցույց է տալիս Պարգև սրբազանի, Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի ստորագրություններով մի շարք փաստաթղթեր, որոնք հավաստում են, թե ինքն ինչե՞ր է արել պատերազմական շրջանում, որքա՜ն փամփուշտ, զենք, կապի միջոցներ, տեխնիկա ու բուժսարքավորումներ է հասցրել գործող

բանակին, որքա՜ն ռուբլի ու դոլլար է «տեղ հասցրել» ու բաժանել գաղթականներին ու կարիքավորներին): Հիմա կարող եմ ասել՝ գալուս նպատակն արդարացավ. լսածներս աչքովս տեսա:

ԹՂԹ. – *Հայաստանի հետ կապերն ու հարաբերություններն ինչպե՞ս են:*

Ն. Գ.– Վաղ մանկությունից եմ հայրենասեր: Հայաստանի հետ սերտորեն կապված ենք 1958 թվից, երբ եղբայրս Կիրովաբադում դպրոցն ավարտելուց հետո Երևանում ուսանող դարձավ: Հիմա աղջիկս էլ է այստեղ, երկու թոռներս էլ: Ձգող շատ բան կա:

ԹՂԹ. – *Իսկ Կրասնոդարի երկրամասի ռուս բնակչության, Կուբանի կոզակների հետ ի՞նչ հարաբերություններ ունեք:*

Ն. Գ.– Հրաշալի՛: Լավը չլինեին՝ երկար չէի մնա նրանց մեջ: Հենց նրանց բարյացակամությամբ եմ իմ համեստ աշխատանքով գումար վաստակել, պատիվ, հեղինակություն ձեռք բերել: Առանց մանրամասներ հրամցնելու՝ մի փաստ ասեմ միայն: Երբ կոզակների ատամանը՝ իննսունամյա Դինչենկոն, Եղեռնի 95-ամյակի առթիվ իր խմբով Երևան պիտի մեկներ, մինչև օդակայան ես եմ ճանապարհել:

ԹՂԹ. – *Կրասնոդարում երբեմնի ծանոթ աղբեջանցիների հանդիպո՞ւմ եք:*

Ն. Գ.– Թուրքերի՜, իհարկե հանդիպում եմ, բայց ես նրանց չեմ բարևում: Եթե թշնամացած պետություններն էլ հաշտվեն, բարեկամանան, նրանց հետ իմ պատերազմը չի վերջանալու, որովհետև ես նրանց լավ եմ ճանաչում, նրանց՝ երեսիդ ասած խոսքի տակ ե՛ս լավ գիտեմ, թե ինչ նենգություն կա թաքնված: Կրասնոդարի շուկայում կողք կողքի առնտուր էին անում մի հայ ու դրանցից մեկը: Հայն ինձ ասաց, թե Կոլյա՛, կիրոնվաբադցի քո հարևանն է, շատ է ուզում քեզ տեսնել, խոսի՛ր հետը: Ես չպատասխանեցի: Կրկնվեց մի քանի անգամ: Ամիսներ հետո մի ուրիշ վայրում ինձ պատահեց միևնույն թուրքը և մոտենալով՝ հայերենով ասաց՝ բարև, Կոլյա: Ես էլ ընդամենն ասացի՝ բարև, ու հեռացա: Աշխարհով մեկ մեր դեմ թշնամություն քարոզողների, մեր հանդեպ ատելություն սերմանողների, մեր անմեղ զինվորներին նենգորեն խփողների հետ իմ պատերազմը շարունակվելու է:

ԹՂԹ. – *Առանց Ձեր ռուս կնոջ՝ տիկին Վերա Միխայլովնայի համաձայնության Դուք անզոր կլինեիք. ինչպե՞ս է ռուս տիկինը գնահատում Ձեր հայրենասիրական ծրագրերն ու այդ վարքագիծը:*

Ն. Գ. – Ինքն այստեղ է բարեբախտաբար, թող ինքն ասի: Պատահել է, որ առանց հասկանալու երբեմն դիմադրել է, բայց հետո, երբ հասկացել է, ասել է՝ ты прав, Коля, դու ճիշտ ես, дорогой:

Վ Մ. - У нас же один крест и одна вера, много общего, мы же родные (Մենք միևնույն խաչն ունենք և նույն հավատը, չէ՞ որ մենք հարազատներ ենք՝ բազմաթիվ ընդհանրություններով…

ԹՂԹ. – Այդ հարազատության զգացումով էլ թույլ տվեք ավարտել մեր հարցազրույցը, ձեզ բարի ճանապարհ մաղթել և հաջողություններ թե՛ անձնական կյանքում, թե՛ մարդասիրական ու ազգանվեր գործունեության մեջ:

ԹՂԹԱԿԻՑ

ՍԵԶՆԻՑ ՀԵՌԱՑԱԾ ՄԵՐ ՍԻՐԵԼԻՆԵՐԸ. **ՍԵՅՐԱՆ ՍՄԲԱՏԻ ԱՄԻՐՅԱՆ**

Ամեն հայի կորուստ, անշուշտ, ցավալի է, առավել ևս՝ եթե հարազատ է: Կարող է և արյունակից չլինել, բայց լինել թանկ ու մտերիմ: Իսկ մտերմությունն ստեղծվում է տևական ժամանակում:

Վերջերս իր մահկանացուն կնքեց հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարանի երկարամյա դասախոս ***Սեյրան Սմբատի Ամիրյանը:***

72 տարի ապրեց նա և իր ողջ գիտակցական կյանքը անմնացորդ նվիրաբերեց հայրենանվեր գործերի: Իր կազմակերպչական բացառիկ ունակությունները նա դրսևորեց հայ բանասիրության ֆակուլտետում ուսանելու տարիներից, ճանաչվեց ու սիրվեց որպես ազնիվ ու վստահելի ընկեր:

1960-ական թթ. Երևանի միակ պետական համալսարանը ազգային զարթոնքի գլխավոր վառարանն էր, իսկ Ս. Ամիրյանը՝ առաջամարտիկներից մեկը: Նրան վստահվել էր համալսարանի կոմերիտմիության քարտուղարի պաշտոնը, որը նա կատարում էր սիրով ու նվիրումով: Խորապես գիտակցելով անհատի համակողմանի զարգացման անհրաժեշտությունը՝ նա մեծ ջանքեր ներդրեց համալսարանական և հատկապես ուսանողական մշակութային կյանքի կազմակերպման ոլորտներում: Ոչ միայն ուսանողության և ժամանակի նշանավոր գրողների, գիտության ու մշակույթի գործիչների (Գոհար Գասպարյան, Վիլյամ Սարոյան, Հովհաննես Շիրազ, Պարույր Սևակ, Լուսինե Զաքարյան, Խորեն Պալյան և ուրիշներ) հանդիպումների, հայրենագիտական արշավների նախաձեռնողներից մեկն էր, այլև ուսանողական 120 հոգիանոց քառաձայն երգչախումբի՝ Հովհաննես Ջեքիջյանի ղեկավարությամբ, ջութակահարների համույթի՝ Ջիվան Տերթադևոսյանի ղեկավարությամբ, ժողգործիքների նվագախմբի՝ Նորայր Հովհաննիսյանի ղեկավարությամբ, թատերական և ասմունքի խմբակների, որոնք համալսարանական առօրյան դարձնում էին բովանդակալից ու համակողմանիորեն հագեցած: Հարկ է նշել, որ այդ համույթների կատարողական մակարդակը այնպիսի բարձրություն ու պահանջարկ ուներ, որ շրջագայություններով հանդես էին գալիս ոչ միայն մեր հանրապետության մոտ ու հեռավոր շրջան-ների, այլև Մոսկվայի և միութենական հանրապետութ-յուն-ների զանազան քաղաքների բեմերում:

Սեյրան Ամիրյանին, սակայն, չէր հրապուրում խորհրդային կուսակցական ղեկավարի գայթակղիչ հեռանկարը: Իր ապագա աներոջ՝ ականավոր լեզվաբան ակադ. Գուրգեն Սևակի խորհրդով նա գերադասեց գիտության ու մանկավարժության բնագավառը: Մոսկովյան ասպիրանտուրայում խորանալով հոգեբանական գիտության մեջ՝ այնտեղ էլ պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն, ստացավ գիտական աստիճան ու դոցենտի կոչում:

Հայաստանի անկախության տարիներին հոգեբանի իր հեղինակությամբ հայտնի Ս. Ամիրյանը, դասախոսական աշխատանքին զուգահեռ հաճախ էր հանդես գալիս հեռուստաելույթներով, բարեխղճորեն կատարում դատա-հոգեբանական փորձագետի՝ իրեն վստահված պաշտոնը: Դասախոսելուն զուգահեռ՝ նա մեծ ներդրում ունեցավ ԵՊՀ-ում հոգեբանության գիտահետազոտական լաբորա-տորիայի ստեղծման գործում:

Սիրում էր հայոց մայր բուհը և նրա ուսանողներին, իր ընտանիքը, երեխաներին, ընկերներին: Լավ մարդու հատուկ տեսակ էր: Այդքան բազմազբաղ լինելով՝ նա «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտա-նիքների հիմնադրամի» լավ բարեկամն էր: Ոչ միայն հիանալի խորհրդատու էր, այլև անձամբ էր մասնակցում հիմնադրամի ծրագրերին ու նախաձեռնություններին:

Բոլորը հիշում են, թե ինչ եռանդով ու պատրաստա-կամությամբ էր Ս. Ամիրյանը մասնակցում Երևանի և Արցախի պետական համալսարանների ուսանողների մի-ջոցով իրականացվող պարբերական ծառատունկերին և հատկապես Երևանի պետական համալսարանի 90-ամյակի անվան պուրակի հիմնադրմանը Բերձորում:

Ամենալուրջ խնդիրներին նայում էր իրեն բնորոշ լայն ու բարի ժպիտով, անգամ կյանքի ու մահվան առեղծվածներին: Հեռացավ մեզնից՝ թողնելով բարի անուն և գեղեցիկ, շատ գեղեցիկ հիշողություններ:

Օրհնյա՛լ լինի նրա անունն ու հիշատակը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԵՐ ԱՌՕՐՅԱ ՑԱՎԵՐԻՑ ՈՒ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻՑ

«Կովը տալիս են, որ մարդ կթի ուտի և ոչ թե մորթի ուտի»,- ասում է ժողովրդական իմաստությունը: Սակայն, ցավոք, միշտ չէ, որ այդպես է լինում: Հիմնադրամի «Կով» ծրագիրն արդարացնում է իրեն: Հարյուրավոր կովեր են տրվել բազմազավակ կարիքավոր ընտանիքներին. դրա շնորհիվ նրանք մշտապես ունենում են թարմ կաթ ու կաթնամթերք, որով զգալիորեն թեթևանում են հոգսերը: Սակայն անփութությունն ու անպատասխանատվությունը, առավել ևս՝ ագահությունը, անասնապահության մեջ երբեմն հանգեցնում են անցանկալի հետևանքների, նաև գլխաքանակի անկման, որի համար միայն գայլերին մեղադրելը շատ անարդար կլինի: Չենք կարող: Անկման վերաբերյալ ակտերում «ներքոստորագրյալներն» իրենք նշում են 33 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որոնցից 6-ը անկել են, իսկ ո՞ւր են տարիների ընթացքում նրանց ծնած հորթերը, և ինչո՞ւ է Մյասնիկ Մաթևոսյանը հիմնադրամին փոխանցել 2, 500 000 դրամ. արդյոք գայլերի՞ կերածի համար…

Ընթերցողին ենք ներկայացնում կորուստների պատ-ճառները հիմնավորող միևնույն ձեռագրով երկու վավերագիր.

ԱԿՏ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ԼՂՀ Քաշաթաղի շրջանի անասնաբուժական սպասարկման կայանի տնօրեն Արմեն Էլբակյանի, Աղավնո գյուղի բնակիչ Մյասնիկ Մաթևոսյանի, «Գյուղի և գյուղա-տնտեսության աջակցության հիմնա-դրամի» Քաշաթաղի շրջանի տարածքային բաժնի տնօրեն Միեր Եսայանի մասնակ-ցությամբ կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնա-դրամին» պատկանող ընդհանուր թվով 33 գլուխ խոշոր եղջերավոր անասուններից 4 գլուխը անկել են գայլի հոշոտումից, 2 գլուխը՝ հիվանդությունից, իսկ մնացած 27 գլուխը տրամադրվել է Քաշաթաղի բազ-մազավակ ընտանիքներին: Մյասնիկ Մա-թևոսյանի կողմից «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» 2011 թ. փոխանցվել է 2. 500 000 դրամ:

ՃԻՇՏ է, որի համար ստորագրում ենք՝

Կայանի տնօրեն՝ /ստորագրություն/

Ա. Էլբակյան

Աղավնո գյուղի բնակիչ՝

/ստորագրություն/ Մ.Մաթևոսյան

Բաժնի տնօրեն՝ /ստորագրություն/

Մ. Եսայան

Հաստատում եմ՝ տնօրեն՝

/ստորագրություն/ Ա. Էլբակյան/

ԱԿՏ

Մենք՝ ներքոստորագրողներս՝ ԼՂՀ Քաշաթաղի շրջանի անասնաբուժական սպասարկման կայանի տնօրեն Արմեն Էլբակյանի, Աղավնո գյուղի բնակիչ Մյասնիկ Մաթևոսյանի, «Գյուղի և գյու-ղատնտեսության աջակցության հիմնա-դրամի» Քաշաթաղի տարածքային բաժ-նի տնօրեն Միեր Եսայանի մասնակ-ցությամբ կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին. «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի շրջանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» պատկանող ընդհանուր թվով երեսուներեք գլուխ տարբեր սեռահասակային խմբի խոշոր եղջերավոր անասուններից չորս գլուխ անկել են գայլի հոշոտումից, երկու գլուխը՝ հիվանդություններից, իսկ մնացած քսանյոթ գլխաքանակից տասը կով «Ագարակից» տրամադրվել է Քա-շաթաղի բազմազավակ ընտանիքներին:

Մյասնիկ Մաթևոսյանի կողմից «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնա-դրամին» 2011թ. փոխանցվել է 2. 500 000 դրամ 17 գլուխ տարբեր սեռա-հասակային խմբի խոշոր եղջերավոր անասունների համար, որը չի վերա-դարձվել հիմնադրամի պատկանելիու-թյանը:

ՃԻՇՏ է, որի համար ստորագրում ենք՝

Քաշաթաղի շրջանի անասնա-բուժական սպասարկման կայանի տնօրեն՝ /ստորագրություն/

Արմեն Էլբակյան

Աղավնո գյուղի բնակիչ՝/ստորագրություն/

Մյասնիկ Մաթևոսյան

«Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի» Քա-շաթաղի տարածքային բաժնի տնօրեն՝ /ստորագրություն/

Միեր Եսայան

25.07.2013թ.

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՀԵՂՈՒՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Հայախոս և հայագիր հնդկուհի Սանտոշ Կումարի Արորայի նամակից.

Գիտելիքը լույս է: Եվ շատ երեխաներ, անգամ ունենալով բնական տաղանդ, մեր ժամանակներում, ցավոք, հնարավորություն չեն ունենում հասնելու այդ լույսին: Եվ հիանալի է, որ կա «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» նման մի լուսատու փարոս, որ կարող է տալ այդ հնարավորությունը բազմաթիվ շնորհալի երեխաների:

Շատ կարևոր է, որ այդ երեխաները նաև երախտագետ լինելն է, և երբ որ արդեն իրենք աշխատեն ու բարեկեցիկ կյանք ունենան, չմոռանան այն աղբյուրը, որից ժամանակին օգտվել են իրենք ու հասել նման բարձունքների: Նրանք իրենց հնարավորության չափով պարտավոր են այդ աղբյուրի մեջ ներդրում ունենալ, որ երբեք չցամաքի, և իրենցից հետո եկող սերունդները նույնպես օգտվեն նրանից…

Լիլիթ Ավագյանի նամակից.

Իսկապես, աննկարագրելի վեհ զգացողություն է առաջանում, երբ այլևս հույս չկա գտնելու ֆինանսներ՝ քո ուսումնական երազանքներն իրականացնելու համար, և ահա քեզ ձեռք են մեկնում՝ առանց որևէ ակնկալիքի ու «նվիրում» քո կրթությունը քեզ: Այդ պահին հասկանում ես, որ բարի մարդիկ դեռ կան այս աշխարհում, և որ նրանց շնորհիվ է աշխարհը գոյատևում, իսկ ինձ նմանները նրանց շնորհիվ են գտնում իրենց արժանի տեղը այս երկնքի տակ:

Ես բարեհաջող ավարտել եմ և ունեմ բազմաթիվ հաջողություններ, աշխատանք, ընտանիք: Այս ամենը՝ շնորհիվ Գուրգեն Մելիքյանի ղեկավարած հիմնադրամին:

Երախտապարտ կլինեմ ու չեմ մոռանա…

Անահիտ Ավագյանի նամակից.

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» իր գոյությամբ և գործունեությամբ առանձնահատուկ կարևորություն ունի սոցիալական խոցելի խմբերի և առհասարակ ողջ հայ հասարակության համար: Այն խելացի, տաղանդաշատ և նպատակասլաց, սակայն ֆինանսապես անապահով երիտասարդներին ցույց է տալիս անհրաժեշտ աջակցություն նպատակների իրականացման, բարձրագույն կրթություն ստանալու, ինքնահաստատման ճանապարհին: Իսկ դա նշանակում է նաև մեծ հնարավորություն ձեռք բերել և պատրաստ լինել երկրի զարգացման մեջ սեփական որոշակի ներդրումն ունենալու: Այս մեծարգո այրը նպաստում է մարդկանց մեջ ապրումակցման, փոխօգնության,մեծահոգության և բարության ձևավորմանն ու ամրապնդմանը, որոնք կարող են համապատասխան պայ-մանների դեպքում ունենալ դրսևորումներ և ապահովել դրական մեծ առաջընթաց անհատական, հասարակական կամ համընդհանուր մակարդակում:

Իրոք գովեստի է արժանի Գ. Մելիքյանի ղեկավարած հիմնադրամը:

Անսահման երախտագիտությունը հիմնադրամի նկատմամբ հնարավոր չէ բառերով արտահայտել: Նրա գործունեությունը պիտի շարունակական լինի և օրինակելի՝ նմանատիպ հասրակական կառույցների համար:

ԵՊՀ կենսաբանության Ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Մաղլենա Առաքելյանի չափածո շնորհակալությունը.

Գրում եմ, ջնջում, նորից կապակցում
Բառերը՝ սրտիս, մտքիս մեջ խրված,
Ձեզ ուղղված բազում ջերմագին խոսքեր,
Հոգու մաղթանքներ ու խոնարհումներ:
Խոսքով զորեղ եք ու սրտով՝ անպարտ:
Ձեր հայացքն՝ անհուն, ու գործն է անմահ:

Կոռիկոսի Աղջկաբերդի ցերեկն ու գիշերը

2012թ. ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍԻՑ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ՝ ՀՀ ԴՐԱՄՈՎ

Անվանում	Գումարի չափը	Նպատակը	Ամսաթիվը
1.ՖՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ	162800,00	Օգնություն	05.11.12
2. G.G.ANANIMUS	81 000. 00	Օգնություն 200 դոլարին համարժեք	05.11.12
3. ՄԵԼԻՔՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ	19800,00	Օգնություն ծառերի ծրագիր ՄԱՔՐՈՒՀԻ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ հիշատակին ի փոխան ծաղկեպսակի	20.11.12
4. SUZANNA TAMAZYAN	81200,00	Օգնություն	07.12.12
5.ZOHRAB ALAJAJIAN	81390,00	Օգնություն	07.12.12
6. HOVHANNES AIVAZIAN	81400,00	Օգնություն	07.12.12
7. EDVARD SARKISYAN	81400,00	Օգնություն	07.12.12
8. ERVAND MNATCAKANIAN $ ASHOT ABOVYAN	81500,00	Օգնություն	07.12.12
9. ARMEN &ELEANORA HAYRAPETYAN	101750,00	Օգնություն	07.12.12
10. ՎԱՀԱԳՆ ՍԵԹՅԱՆ VAHAGN SETYAN	122100,00	Օգնություն	07.12.12
11. HAKOB & ANAHIT GYULEDJIAN	122100,00	Օգնություն	07.12.12
12. RAFIK GALSTANYAN	122250,00	Օգնություն	07.12.12
13. VLADIMIR AMIRKHANYAN	203000,00	Օգնություն	07.12.12
14. V.S.P. CORP, SUREN PIRJANYAN	203500,00	Օգնություն	07.12.12
15. HAKOB TUTUNJIAN	203500,00	Օգնություն	07.12.12
16. HAGOB MUSHOYAN	203500,00	Օգնություն	07.12.12
17. ALBERT KHANLARYAN	203500,00	Օգնություն	07.12.12
18. TEHRANI HAYOTS QUSHESH-DAVTIAN DPROTSI 1962 TVAKANI SHRJANAVARTNER	284900,00	Օգնություն	07.12.12
19. LOZIK KAREK GARIKYAN	407000,00	Օգնություն	07.12.12
20. ARAM & AIDA CHOBANIAN	407000,00	Օգնություն	07.12.12
21. ARKADI AND IRA HOVHANNESYAN	447700,00	Օգնություն	07.12.12
22. ԿԼԱՐ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ	8130,00	Օգնություն	13.12.12
23. DIANA TER SAHAKIAN	8140,00	Օգնություն	13.12.12
24. ANNA TOM AND SUREN YEGIYANTS	40700,00	Օգնություն	07.12.12
25. ATELIER DE PARIZ	40700,00	Օգնություն	07.12.12
26. MINAS KOJAYAN	40700,00	Օգնություն	07.12.12
27. ONIK KHOURDAJIAN	40700,00	Օգնություն	07.12.12

28. ASPET AND AIDA BOGARIAN	40750,00	Օգնություն	07.12.12
29. STELLA GALSTANIAN	61125,00	Օգնություն	07.12.12
30. ARTASHES AND HASMIK YEGIANTS	61125,00	Օգնություն	13.12.12
31. HAYK GHARAKANIAN	81300,00	Օգնություն	13.12.12
32. HAMO AND EMMA ASHASIAN	81400,00	Օգնություն	13.12.12
33. SUREN BADALIAN	81500,00	Օգնություն	13.12.12
34. VAHE AND SEDA KAZANDJIAN	122100,00	Օգնություն	13.12.12
35. HAMO BAGHDANIAN	12180,00	Օգնություն	13.12.12
36. ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵԴՐԱԿՅԱՆ ԴԱՎԻԹ ԵՎ ԴՈՑԵՆՏ ՊԱՊՈՅԱՆ ԱՐԳԱՄ	200000,00	Օգնություն գրքերի ծրագիր	13.12.12
37. VICTOR GREGORY	203750,00	Օգնություն	13.12.12
38. ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի ՀԱԿՈԲ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ հիշատակին	26.12.12
39. ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի ԶԱԲԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ անմահ հիշատակին	26.12.12
40. ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի ԼԵՄՍ ՏԻՏԱՆՅԱՆԻ հիշատակին	26.12.12
41. ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի մեր սիրելի ՍԵՅՐԱՆ ԱՄԻՐՅԱՆԻ անմահ հիշատակին	26.12.12
42. HAYK KAFTARIAN	40700,00	Օգնություն	26.12.12
43. KHURSHUDYAN FAMILY	40700,00	Օգնություն	26.12.12
44. SUREN & OLGA VARDANIAN	42630,00	Օգնություն	26.12.12
45. VIGEN ZARGARIAN	61125,00	Օգնություն	26.12.12
46. GEORG $ MATILDA YEGIYANC	81800,00	Օգնություն	26.12.12
47. VJ AND ASSOCIATES	162800,00	Օգնություն	26.12.12
48. MARY AND NICK KANIAN	203500,00	Օգնություն	26.12.12
49. VIGEN ZARGARIAN	203500,00	Օգնություն	
50. ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ	30000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի ՖՐՈՒՆԶԻԿ ԽԱՌԱՏՅԱՆԻ հիշատակին	28.12.12
51. RAFFI BABAKHANIAN	40400,00	Օգնություն	28.12.12
52. SEBUH &SONIA OHANIAN	40700,00	Օգնություն	28.12.12
53. GLENDALE COMPPUTER PROGRAMMING CENTER	60600,00	Օգնություն	28.12.12
54. ARTASHES BALIAN	60600,00	Օգնություն	28.12.12
55. LEVON MARASHLIAN	80800,00	Օգնություն	28.12.12
59. ISHKHAN & ANAHIT BABAJANIAN	80800,00	Օգնություն	28.12.12

60. ARSEN&IRINA MATEVOSYAN	81000,00	Օգնություն	28.12.12
61. RUBEN MARGARYAN	101000,00	Օգնություն	28.12.12
62. MABELLE COHEN	101250,00	Օգնություն	28.12.12
63. HARRY & RAFFI BALIAN	121200,00	Օգնություն	28.12.12
64. MIMI ZAROOKIAN	121500,00	Օգնություն	28.12.12
65. SHAHEN SAM NAZARIAN	121500,00	Օգնություն	28.12.12
66. HAYK & TEREZA HAYRAPETYAN	121500,00	Օգնություն	28.12.12
67. Vartkes M Seropian	162000,00	Օգնություն	28.12.12
68. Vartkes M Seropian	162000,00	Օգնություն	28.12.12
69. ARMOND VARTANIAN	162800,00	Օգնություն	28.12.12
70. MEDICAL OUTREACH FOR ARMENIAS	202000,00	Օգնություն	28.12.12
71. FREDERICK VARTANIAN	242400,00	Օգնություն	28.12.12
72. Vigen Avetisyan	40650,00	Օգնություն	28.12.12
73. Georg Azizyan	40650,00	Օգնություն	28.12.12
74. Vahe Shirinyan	283500,00	Օգնություն	28.12.12
75. Emma & Varujh Kyureghyan	810000,00	Օգնություն	
76. ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի - մեծագույն հայուհի, սիրելի ՆԱԶԵԼԻԻ անմոռանալի հիշատակին	
77. ՎԱՐԴԱՆ ԵՎ ԱՆՆԱ ՋԱՆԳՈՋՅԱՆՆԵՐ	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի սիրելի ՆԱԶԵԼԻԻ անմահ հիշատակին	
78. էջմիածնի սոցալական օգնություն	100000,00	սոցալական օգնություն	21.02.13
79. ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի սիրելի ՀՈՒՓՍԻՄԵ ԱՐԱՄՅԱՆԻ հիշատակին	21.02.13
80. ՀԱԿՈԲ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆ,ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	20000,00	Օգնություն գրքերի ծրագիր	22.02.13
81. ՎԱՉԳԵՆ ԱԼՈՅԱՆ	220000,00	Օգնություն ուսման ծրագիր	22.02.13
82. ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսա-հարգարժան ՍԱՄՎԵԼ ԱՐՏԱՇԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ անմահ հիշատակին 18.02.13թ.	26.02.13
83. ԵՊՀ թյուրքագիտության ամբիոն	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր -հարգարժան ՍԱՄՎԵԼ ԱՐՏԱՇԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ անմահ հիշատակին 18.02.13թ.	26.02.13
84. Մելիքյան Գուրգեն	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի հարգարժան պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հիշատակին	05.03.13
85. Մելիքյան Գուրգեն	40000,00	Օգնություն TREE PROJECT IN THE MEMORY OF OUR DEAREST ANNE N.MERIAN 25.02.2013	05.03.13

86. Բրոյան Ռաֆֆի	219500,00	Օգնություն ուսման ծրագիր, Սիրիահայերին Ռաֆֆի Բրոյանի և Հենրիկ Շահնազարյանի կողմից	12.03.13
87. Սահակյան Աննիկ	20100,00	Օգնություն	13.03.13
88. Մալոյան Էֆիկ և Լևոն	40200,00	Օգնություն	14.03.13
89. Մարաշլյան Ալիս	40200,00	Օգնություն Մարաշլյան ընտանիքի կողմից	14.03.13
90. Գալստյան Արթուր	60700,00	Օգնություն	14.03.13
91. Թորոսյան Ռոմիկ	81000,00	Օգնություն	14.03.13
92. Աշեղի Ռուբեն	81100,00	Օգնություն	14.03.13
93. Կրխեյան Հակոբ	81400,00	Օգնություն	14.03.13
94. Վարդանյան Քրիստ	121000,00	Օգնություն	14.03.13
95. Բաբաջանյան Մասիս	121300,00	Օգնություն	14.03.13
96. Բաշմակյան Հակոբ և Ալիսա	121900,00	Օգնություն	14.03.13
97. Եղյանց Արտաշես և Հասմիկ	161500,00	Օգնություն	14.03.13
98. Շահբազյան Գառնիկ	202500,00	Օգնություն Շահբազյան Գառնիկի, Լայլայի և Շարիսի կողմից	14.03.13
99. Թորոսյան Ռուբիկ	202500,00	Օգնություն	14.03.13
100. Խուդադադյան Հրաչ Khudadadian MD inc Hrach	60700,00	Օգնություն	26.03.13
101. Թորոսյան Ռոստոմ American heating technologies INC	101125,00	Օգնություն	16.03.13
102. Barseghian Albert	446350,00	Օգնություն կովերի ծրագիր	28.03.13
103. Najarian Carolann & George	599000,00	Օգնություն ուսման ծրագիր	28.03.13
104. Մելիքյան Գուրգեն	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի անչափ սիրելի ԱՐԵՎՀԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հիշատակին	13.04.13
105. Մելիքյան Գուրգեն	20000,00	Ծառերի ծրագիր՝ անչափ սիրելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ հիշատակին	13.04.13
106. Մելիքյան Գուրգեն	20000,00	Ծառերի ծրագիր՝ անչափ սիրելի ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՊՐԵՍԻ հիշատակին	13.04.13
107. Մելիքյան Գուրգեն	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի սիրելի մայրիկ ԺԵՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆԻ հիշատակին	15.04.13
108. Մելիքյան Գուրգեն	20000,00	Օգնություն ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԱԼՈՒՍՏԻ անմոռանալի հիշատակին,15.03.13թ.	
109. Ֆրունզիկ Գրիգորյան	249500,00	Օգնություն ԽԵԱ ծրագիր	17.04.13
110. Սանամյան Սամվել	249500,00	Օգնություն ԽԵԱ ծրագիր	17.04.13
111. Ստալիկ Պապյան	250000,00	Օգնություն ԽԵԱ ծրագիր	17.04.13
112. Միրզոյան Քնարիկ և Ալ.Սաֆարյան	9800,00	Ծառերի ծրագիր՝ ի փոխան ծաղկեպսակի ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՊՐԵՍԻ հիշատակին	18.04.13

113. ԱԼԵՔ ԵՎ ԱԼԵՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐ	166400,00	Օգնություն	19.04.13
114. HAIGOUSH KOHLER	124800,00	Օգնություն	19.04.13
115. MAX RAMIRES	6108,60	Օգնություն	07.12.12
116. ANGEL BAKHTAMIAN	10181,00	Օգնություն **25 USD**	07.12.12
117. NATALIA OGANESIAN	26470,60	Օգնություն **65 USD**	07.12.12
118. ATELIER DE PARIZ	36651,60	Օգնություն **90 USD**	07.12.12
119. SUREN & OLGA VARDANIAN	42760,20	Օգնություն **105 USD**	07.12.12
120. MATEOS MATEVOSIAN	61086,00	Օգնություն **150 USD**	07.12.12
121. SARKIS &AIDA BADALYAN	81448,00	Օգնություն **200 USD**	07.12.12
122. MASIS BABAJANIAN	122172,00	Օգնություն 300 **USD**	07.12.12
123. ARTASHES & HASMIK YEGIANS	162896,00	Օգնություն 40**0 USD**	07.12.12
124. GARNIK,LAYLA & SHARIS SHAHBAZIAN	203620,00	Օգնություն **500 USD**	07.12.12
125. RAFFI & ASTGHIK TUMANYAN	203620,00	Օգնություն **500 USD**	07.12.12
126. COWANSVILLE HOLDINGS LIMITEDDRAKE CHAMBERS TORTOLA VIRGIN ISLANDS BRITISH	8113740,00	Օգնություն **19960 USD**	19.12.12
127. ԱԶՈՅԱՆ ՄՀԵՐ	209125,00	Օգնություն **500 USD**	08.04.13
128. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՌՈՒԲԵՆ	245400,00	Օգնություն **600 USD**	
129. ԱԼԹԻԲԱՐՄԱՔՅԱՆ ՀԱԿՈԲ	753375.00	Օգնություն **1500 եվրո**	02.08.2012
Ընդամենը՝	**23702924,00**		

Գ. ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
2012- 13 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԵՃԱՐՎԱԾ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

1.	Ղարագյոզյան Տիգրանուհի	150000.00	ԵՊԲՀ	ԸԲՖ, 2-րդ կուրս	1.6. 2012	
2.	Գյոզալյան Տաթև	75000.00	Եր գեղարվեստի պետ ակադեմիա	մոդելի բաժին	10.04.2012	
3.	Ըռքոյան Անահիտ	80000.00	Թերլեմեզյանի գեղարվ. քոլեջ	2-րդ կուրս	9.09.2012	
4.	Բաղալյան Անի	80000.00	ազգարային համալսարան	տնտեսագիտ. ֆակուլտետ, 4-րդ կուրս	10.09. 2012	
5.	Գևորգյան Արքուր	125000.00	ԵՊՀ	հայ բանասիրության ֆակ., 4-րդ կուրս	10.09. 2012	
6.	Սարիբեկյան Հրանտ	80000.00	ՀՊՏՀ	հաշվապահական հաշվառում, 2-րդ կուրս	10.10. 2012	
7.	Ալեքսանյան Մարգարիտա	50000.00	Գորիսի ՊՀ	պատմաիրավագիտական ֆակ., 4-րդ կուրս	10.10 2012	
8	Ավագյան Էրիկ	50000.00	Արցախի պետհամալսարան	տնտեսագիտ. ֆակ., 3-րդ կուրս	1.7. 2012	
9.	Իսրայելյան Գևորգ	50000.00	ՀՊԱՀ Ստեփանակերտի մ/ճ	ագրոնոմիա, 4-րդ կուրս	9.7. 2012	
10.	Մարության Հենրիկ	50000.00	ՀՊԱՀ Ստեփանակերտի մ/ճ	ագրոնոմիա 3-րդ կուրս	10 .7. 2012	

11.	Մարտիրոսյան Ինգա	50000.00	ՀՊԱՀ Ստեփանակերտի մ/ճ	ագրոարտադրություն 3-րդ կուրս, հեռակագ	10.7. 2012	
12.	Պարոնյան Մարիամ	50000.00	պարարվեստի պետական քոլեջ	ժողովրդական պարեր, 3-րդ կուրս	10.17. 2012	
13.	Շաշիկյան Գրիգոր	70000.00	ԵՊՀ, Ստ. Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ	հայ բանասիրություն, 4-րդ կուրս	10.18. 2012	անվանակ. կրթաթոշակ
14.	Չուխաջյան Արմինե	100000.00	ԱրՊՀ	ռուս. բանասիրության 2-րդ կուրս, մագիստրատուրա	10.18.2012	
15.	Մովսիսյան Արսեն	50000.00	ԱրՊՀ	մանկավարժության ֆակուլտետ, , ՆՁՊ 1-ին կուրս	10.31. 2012	
16.	Վարդանյան Անի	50000.00	ԱրՊՀ	մանկավարժ. մեթոդիկա, 1-ին կուրս	10.31.2012	
17.	Գալստյան Նոնա	130000.00	ԵՊՀ	բանասիրական մագիստրատուրա 1-ի կուս	11.012012	
18.	Միքայելյան Յուրի	150000.00	ԵՊՀ	տնտեսագիտություն, 4-րդ կուրս	11.01.2012	
19.	Գրիգորյան Անի	60000.00	ԵՊՀ	պատմ. ֆակ., արվեստաբ. 2-րդ կուչս, մագիստր.	12.12.2012	
20.	Խաչգսյան Վարսենիկ	80000.00	ԵՊՀ	սոցիոլոգիա 4-րդ կուրս	12.12.2012	
21.	Յուխանովա Լուիզա	90000.00	ԵՊՀ	ռոմանագերմանական 4-րդ կուրս	12.12.2012	
22.	Մարտիրոսյան Արմինե	100000.00	ԵՊՀ	միջազգային հաչաբերություններ, 3-դ կուրս	12.12.2012	
23.	Ղազարյան Արփինե	100000.00	ԵՊՀ	արևելագիտ., արաբագիտ. մագիսր. 2-րդ կուրս	12.12.2012	
24.	Խարդարյան Լուսինե	100000.00	ԵՊՀ	ֆիզիկա, մագ. 2-րդ կուրս	12.12,2012	
25.	Խահակյան Նարե	100000.00	ԵՊՀ	ժուռնալիստիկա 4-րդ կուրս	12.12.2012	
26.	Ավետիսյան Կարինե	100000.00	ԵՊՀ	հայ բանասիրության ամբիոն, հայցորդ	12.12.2012	
27.	Գասպարյան Մարիետա	100000.00	ԵՊՀ	պատմ. ֆակ., մշակութաբ. մագիստր. 2-րդ կուրս	12.12.2012	
28.	Երանոսյան Անի	125000.00	ԵՊՀ	տնտեսագիտության 3-րդ կուրս, հեռակա	12.12.2012	
29.	Երանոսյան Լիլիթ	125000.00	ԵՊՀ	տնտեսագիտության 3-րդ կուրս, հեռակա	12.12.2012	
30.	Մխիթարյան Արմեն	125000.00	ԵՊՀ	միջազգային հարաբ. մագիստր. 2-րդ կուրս	12.12.2012	
31.	Ավագյան Հայկ	150000.00	ԵՊՀ	տմտեսագիտության 3-րդ կուրս հեռակա	12.12.2012	
32.	Կիրակոսյան Օֆելյա	225000.00	ԵՊՀ	իրավագիտության 4-րդ կուրս	12.12.2012	
33.	Կիրակոսյան Մարտա	225000.00	ԵՊՀ	ռոմանագերմ. անգլիական 3-րդ կուրս	12.12.2012	
34.	Գալստյան Աստղիկ	450000.00	ԵՊՀ	արևելագիտ. իրանագիտության 4-րդ կուրս	12.12.2012	
35.	Թամարյան Աննա	60000. 00	ԵՊՀ	աշխարհագր. 3-րդ կուրս	12.18.2012	
36.	Արզանյան Աննա	60000.00	ՀՊՄՀ	սոցիոլոգիա և մանկավարժ. 3-րդ կուրս	12.18.2012	
37.	Բալասանյան Վարսենիկ	100000.00	ԵՊՀ	աշխ. և երկրաբ. կադաստրային գործ, 4-րդ կուրս	12.19. 2012	
38.	Ռոմիանց Մարինա	100000.00	ԵՊՀ	ռոմ. գերմ. 4-րդ կուրս	12.25. 2012	
39.	Խալաթյան Օֆելյա	60000.00	ԵՊՀ	արևելագիտ. իրաանագիտ. 2-րդ կուրս	1. 15. 2013	
40.	Խաչատրյան Սամվել	160000.00	ՀՊԱՀ Ստեփանակերտի մ/ճ	ագրոնոմիա 1-ին կուրս	1.15.2013	
41.	Բաղդասարյան Դավիթ	73000.00	ԿԱՊՏԱՐԱՐ ՍՊԸ	գերմաներեն լեզվի ուսուցում	1.16.2013	
42.	Գրիգորյան Մուշեղ	130000.00	ԵՊՀ	աշխարհագր, և երկրաբ. 3-րդ կուրս, հեռակա	1.21. 2013	
43.	Եղիկյան Նոյեմի	130000.00	ԵՊՀ	ժատմ. նակ., արվեստաբանության 1-ին կուրս	1.22.2013	
44.	Մնացականյան Մարիամ	50000.00	ԵՊՀ	տնտեսագիտ. կառավարում, հեռակա 2-րդ կուրս	1.25.2013	
45.	Կիրակոսյան Մարտա	125000.00	ԵՊՀ	տնտեսագիտ., կառավարում, հեռ. 2-րդ կուրս	2.04..2013	

46.	Ալոյան Վազգեն	220000.00	ԵՊՀ	միջազգ. հարաբ., մագիստրատուրա, 2-րդ կուրս	2.25.2013	
47.	Պարոնյան Մարիամ	50000.00	ժարարվեստի պետական քոլեջ	ժողովրդական պարեր 3-րդ կուրս	2.26.2013	
48.	Խարիբեկյան Հրանտ	60000.00	ՀՊՏՀ	հաշվ. հաշվառում և աուդիտ, 2-րդ կուրս	2.28.2013	
49.	Ղարագյոզյան Տիգրանուհի	200000.00	ԵՊԲՀ	ԸԲՖ, 2-րդ կուրս	2.28.2013	
50.	Թելումյան Էլեն	60000.00	ԵՊՀ	քիմ. նակ., կենսաքիմիա, 1-ին կուրս	2.28.2013	
51.	Ազոյան Կորյուն	100000.00	ԵՊՀ	նախապատրաստական	2.28.2013	
52.	Ավագյան Անահիտ	50000.00	ԵՊՀ	պատմության ֆակ. մշակույթ. 4-րդ կուրս	3.15.2013	
53.	Ղոնյան	50000.00	ԵՊՀ	հայ բանասիրություն, մագիստր. 2-րդ կուրս	3.15.2013	
54.	Լաճիկյան Մարիամ	60000..00	ԵՊՀ	ռոմ. գերմ. մագիստրատուրա 2-րդ կուրս	3.15.2013	
55.	Թելումյան Էլեն	60000.00	ԵՊՀ	կենսաքիմիա 1-ին կուրս	3.15.2013	
56.	Գրիգորյան Արմինե	60000.00	ԵՊՀ	ռոմ.գերմ. ԼՄՀ, 3-րդ կուրս	3.15.2013	
57.	Երանոսյան Անի	75000.00	ԵՊՀ	տնտեսագիտ. 3-րդ կուրս	3.15.2013	
58.	Երանոսյան Լիլիթ	65000.00	ԵՊՀ	տնտեսագիտ. 3-րդ կուրս	3.15.2013	
59.	Ավագյան Հայկ	78000.00	ԵՊՀ	տնտեսագիտ. 4-րդ կուրս	3.15.2013	
60	Յուխանովա Լուիզա	90000.00	ԵՊՀ	ռոմ. գերմ. 4-րդ կուրս1	3.15.2013	
61.	Սարգսյան	100000.00	ԵՊՀ	արևել. 1-ին կուրս	3.15.2013	
62.	Համբարձումյան Մարինե	100000.00	ԵՊՀ	ժատմության, մագիստր. 1-ին կուրս	3.15.2013	
63.	Մխիթարյան Աչմեն	137000.00	ԵՊՀ	միջազգային հարաբ. մագիստր. 2-րդ կուրս	3.15.2013	
64.	Սոհրապիան Քավուշ	150000.00	ԵՊՀ	արևելագիտ. մագիստր. 1-ին կուրս	3.15.2013	
65.	Քիթաբչյան Տիգրան	150000.00	ԵՊՀ	լադիոֆիզիկա, մագիստր.	3.15.2013	
66.	Գասպարյան Անահիտ	160000.00	ԵՊՀ	սոցիոլոգիա, մագիստրատ. 1-ին կուրս, հեռակա	3.15.2013	
67.	Կիրակոսյան Օֆելյա	225000.00	ԵՊՀ	իրավագիտ. 4-րդ կուրս, հեռակա	3.15.2016	
68.	Գալստյան Նոնա	110000.00	ԵՊՀ	հայ բանասիրություն, մագիստրատ.,1-ին կուրս	3.22.2013	
69.	Ոսկանյան Վարդիթեր	45000.00	ԵՊՀ	արևելագիտ. թուրքագիտ 1-ն կուրս	3.26.2013	
70.	Պողոսյան Անի	50000.00	Կոմիտասի անվ. կոնսերվատորիա	վոկալ բաժին, մագիստր. 2-րդ կուրս	3.28.2013	
71.	Բալասանյան Վարսենիկ	60000.00	ԵՊՀ	աշխ. և երկրաբ., կադաստր. գործ. 4-րդ կուրս	3.28.2013	
72.	Ժետրոսյան Մարիամ	60000.00	ԵՊՀ	ռոմ.գերմ. 1-ին կուրս	3.28.2013	
73.	Ավագյան Դավիթ	100000.00	ՀՊԵՀ	մաթ. և ինֆորմ. նակ., 1-ին կուրս,	3.28.2013	
74.	Խարգսյան Վարսենիկ	60000.00	ԵՊՀ	սոցիոլոգիա 4-րդ կուրս	3..29. .2013	
75.	Աղաջանյան Անի	100000.00	Հերացու անվ. բժշկ. համալսարան	բուժական ֆակուլտետ, 5դ կուրս	3.29.2013	
76.	Գասպարյան Նելլի	100000.00	Կոմիտասի անվ.. կոնսերվատորիա	Վոկալ բաժին, մագիստրատուրա, 2-րդ կուրս	4.02.2013	
77.	Ավետիսյան Կարինե	100000.00	ԵՊՀ	բանասիրական ասպիրանտուրա, հեռակա	4.30.2013	
78.	Հակոբյան Սուսաննա	60000.00	ԵՊՀ	ռոմ.գերմ., անգլերեն 3դ կուրս	4.30.2013	
79.	Մկրտչյան Սերյոժա	120000.00	Գյումրիի պետ. մանկավարժ. ինստ.	փրկարարական ֆակ., 5դ կուրս		

Ընդամենը՝ 8799200.00

Շարունակություն ԽԵԱ «Կովեր» ծրագրի

	Անուն, Ազգանուն	*Բնակավայրը*	*Երեխաների քանակը*	*Ստացած կովերը*	*Հովանավորողներ*	*Կովի ականջի N*
240	Ստեփանյան Գագիկ Ստեփանյան Գոհար	Գ. Աղավնո	7	1	Թեհրանի հայոց Քուշեշ Դավթյան դպրոցի 1960թ. շրջանավարտներ	6406
241	Սարգսյան Յաշա Սարգսյան Գայանե	Ք. Բերձոր	4	2	Victor Gregory	6497
242	Մաթևոսյան Հերմինե Խաչատրյան Կարեն	Գ. Մարտունաշեն	4	1	Չորանյան Արամ Խաչատրյան Աիդա	6409
243	Հակոբյան Աստղիկ Իսախանյան Արթուր	Գ. Աղավնո	5	1	Սանամյան Սամվել	5542
244	Մանվելյան Անահիտ Մանվելյան Վահրամ	Գ. Գիհուտ	5	1	Շիրինյան Վահե	6457
245	Դալլաքյան Զոյա Մակինյան Նվեր	Գ. Քարեգահ	4	1	Վարդանյան Ֆրեդերիկ	6426
246	Բաղալյան Գայանե Թուխտարյան Վոլոդյա	Գ. Հակարի	6	1	Բարսեղյան Ալբերտ	6492
247	Սարգսյան Ջեմմա Բարսեղյան Սամվել	Ք. Բերձոր	6	1	Գրիգորյան Ֆրունզիկ	17284
248	Արամյան Քրիստինե Մազմանյան Միեր	Գ.Տանձուտ	6	2	Թորոսյան Ռուբիկ Թորոսյան Թեոդոր	6493

Շարունակելի

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝ Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ նվիրատուներ,

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» հայտնում է, որ Ձեր օգնությունը կարող եք ուղարկել «Արդշինինվեստբանկի»՝ Քաշաթաղի մասնաճյուղին հետևյալ հաշվե-համարներով՝

- ՀՀ դրամով՝ 247380007473 0000
- ԱՄՆ դոլլարով՝ 247380007473 0001
- եվրոյով՝ 247380007473 0010

Օգնություն ուղարկելիս թյուրիմացություններից խուսափելու համար խնդրում ենք ընդգծել Ձեր նախընտրած ծրագիրը՝

- ✓ գրքերի ծրագիր
- ✓ ծառերի ծրագիր
- ✓ ուսման ծրագիր
- ✓ ԽԵԱ «Կովերի» ծրագիր:

Սուլուխի վերանորոգված կամուրջը Արածանիի վրա՝ Մուշի մոտ

Հայ արվեստի դու փշրված Մասիս, Անմահության աճյունն ես դու, Անի (Հ. Շիրազ)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձուների խորհուրդը հայտնում է, որ հիմնադրամն այսուհետև շարունակելու է իր օգնությունը 4 և ավելի երեխաներ ունեցող առավել կարիքավոր բազմազավակ ընտանիքների ուսանողների ուսման վարձավճարների ամբողջական կամ մասնակի մուծման ձևով:

2013-14 ուստարում առաջնահերթությունը կտրվի Երևանի և Արցախի պետական համալսարանների՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերի՝ բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողներին, որոնք Արցախի ազատամարտում վիրավորված, հաշմանդամ կամ զոհված ազատամարտիկների երեխաներ են կամ ծնողազուրկ: Ընդ որում՝ 10 տեղ տրվելու է ԼՂՀ ԿԳ նախարարությանը և 4 տեղ՝ Շուշիի վարչակազմին:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ **ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ**, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, բան. գիտ. դ-ր, պրոֆեսոր
ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ, բան. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ, պատմ. գիտ. թեկն., պրոֆեսոր:

Համարի նյութերը, շարվածքը , լուսանկարները և ձևավորումը Ս. Մուրադյանի:

Տպաքանակ՝ 99: Խմբագրության հասցեն՝ Երևան, 375025,
Աբովյան 52 ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ
Հեռ. 54- 43 – 91 + 1- 18, բջջ. 055-52-29-36, 55-25-37: